ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(Մենդյան 120-ամյակի առթիվ)

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայազգի գիտնականների բազմաբեղուն համաստեղությունը XX դարի սկզբին հարստացավ ևս մեկ անունով։ Հայ պատմաբանների, բանասերների, ազգագրագետների, լեզվաբանների, գրականագետների ու հոգևոր մշակույթի այլ բնագավառների գործիչների թվին ավելացավ Թորոս Թորամանյանը։ Նրան վիճակվեց հայ ժողովրդի ճարտարապետական հարուստ ժառանգությունն ըստ ամենայնի հետազոտելու և քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու բարձր պատիվը։

Հարուստ է ու բազմաբովանդակ Թորամանյանի գիտական ժառանգությունը։ Նույնիսկ դժվար է հավատալ, որ այդ ամբողջը մեկ մարդու գործ է, այն էլ՝ հիմնականում կատարված նախասովետական շրջանի խիստ անբարենպաստ պայմաններում. Հետախույզի նրա սուր աչքից չի վրիպել հայ ճարտարապետության որևէ բնագավառ, նույնիսկ երկրորդական որևէ հարց։ Զարմանալի խորազննությամբ նա կարողացել է թափանցել երևույթների մեջ, տալ գիտական ճիշտ մեկնաբանումներ, ստեղծել անվիճելի դրույթներ հայ ժողովրդի շինարարական արվեստի բոլոր ասպարեզներում։ Թորամանյանը հայ ճարտարապետության հավաքական հանրագիտարան է, նրա ամենահեղինակավոր մասնագետն ու մեկնաբանողը, հետազոտական մի ամբողջ դպրոցի հիմնադիրը։

* * *

Թորոս Հարությունի Թորամանյանը ծնվել է 1864 թ., Արևմտյան Հայաստանի Շապին Գարահիսար քաղաքում, հողագործի ընտանիքում։ Դեռևս մանուկ հասակում զրկվելով ծնողներից, կրթություն ստանալու համար 1884 թ. նա Կ. Պոլիս է մեկնում բարեկամների օգնությամբ։ Այստեղ միայն չորս տարի հետո կարողանում է ընդունվել Գեղարվեստից ճեմարանի ճարտարապետական բաժանմունքը, որն ավարտում է 1893 թ.։ Ճարտարապետական գործունեությամբ նա սկզբնապես զբաղվել է Կ. Պոլսում, որտեղից 1896 թ. եղերական դեպքերի կապակցությամբ փոխադրվել է Բուլղարիա։ Հանգրվանելով Սոֆիա և ապա Վառնա քաղաքներում, «Թորոս Խալֆան» (ինչպես նրան անվանում էին այստեղ), նախագծում և կառուցում է բավական թվով մեհյաններ և այլ շենքեր[1]։ Այսպիսով, Կ. Պոլսում և Բուլղարիայում, այնուհետև Ռումինիայում Թորամանյանը շուրջ տասը տարի զբաղվել է գործնական նախագծումներով։ Հակված լինելով դեպի գիտահետազոտական աշխատանքը, արվեստի ու ճարտարապետության պատմությունը, շուտով նա ընդմիշտ հրաժարվում է պրակտիկ գործունեությունից։

---

[1] *Հայկ Հաճոլյան. Թորոս Թորամանյանը Բուլղարիայում.—«Սովետական արվեստ», 1965, № 9, էջ 47—51։*

Խնայած չնչին գումարներով Թորամանյանը ձեռնարկում է մի շարք ճանապարհորդություններ, լինում է Եգիպտոսում, Հունաստանում, Հռոմում, իսկ 1902 թ. մեկնելով Փարիզ, Սորբոնի համալսարանում լսում է լավագույն մասնագետների դասախոսություններն արվեստի ու ճարտարապետության պատմության վերաբերյալ՝ նախապատրաստելով իրեն ապագա գիտահետազոտական աշխատանքների համար։ Այստեղ նա հանդիպում է բանասեր Կարապետ Բասմաճյանին, որին ծանոթ էր դեռևս Պոլսից, ու ընդունում նրա առաջարկը՝ գիտական մի արշավախմբի կազմում Անի մեկնելու վերաբերյալ և նրա հետ Հայաստան է գալիս 1903 թվականին։

Հայրենի երկիրը Թորամանյանի առջև բացվում է որպես հեքիաթային մի աշխարհ։ Հայ ժողովրդի ճարտարապետական հուշարձանները դյուրում են նրան իրենց բարձր արվեստով, դեղարվեստական կատարելությամբ։ «Ուխտեցի մնալ այստեղ,— գրում է Թորամանյանը,— աշխատել, տրքնել... մեր մեծ ժողովրդի հանճարի չնաշխարհիկ բեկորներու փլատակներու և գերեզմանական տրխուր հողակույտերու տակեն ադատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին»[2]։ Հին աշխարհի համընդհանուր ճանաչում ստացած հուշարձաններին քաջածանոթ Թորամանյանը, իրոք, հիանում է Անիի ավերակները դիտելիս։ «Անակնկալ նորություն էր ինձի համար,— գրում է նա,— տեսնելով այնքան գեղարվեստական գոհարներով լեցուն անկյուն մը, ուր իրր օփասիս, Առնելքի հնադարյան խավարի մեջ ծլած ու ծաղկած էր...

...Զիս հետաքրքրեցին անոր ոչ միայն մինչև այն ինձ գրեթե անծանոթ գեղարվեստի գեղեցիկ ու ներդաշնակ հորինվածներու անհուն հարստությունը, այլև մեր ներկա գիտության համար ալ նորություն համարվելու չափ շինարարական արվեստի հետաքրքրական մասերը»[3]։ Ահա դրանց հետ պիտի առնավետ կապվեր նրա կյանքը։

Թորամանյանը հարուստ հողի վրա սկսած իր բեղմնավոր աշխատանքի հենց սկզբից կանդնում է համարյա անհաղթահարելի խոչընդոտների առաջ։ Առանձնապես ծանր էր նրա համար Անիում անցկացրած ձմեռը, ուր, թողնված բախտի քմահաճույքին, ստիպված էր մեծ զրկանքների պայմաններում կատարել իր առաջին հետազոտական աշխատանքները։ Հիշելով Թորամանյանի այդ ժամանակաշրջանի աշխատանքային պայմանների մասին, պրոֆ. Ն. Մառը գրել է. «Ապրելով ցուրտ, չտաքացվող և մինչև ծնկները անձրևաջրով լցված սենյակում, Թորոս Թորամանյանը հասավ ծայր աղքատության, նա օրերով սովի էր մատնված, ծածկված էր ցնցոտիներով»։ Պետք է ենթադրել, որ այս պայմաններն են նրան թելադրում ընդունել Խաչիկ վարդապետ Դաղյանի հրավերն ու վերադառնալ Էջմիածին. այստեղ նա արժանանում է Խրիմյան Հայրիկի ու գիտնական միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի խրախուսանքին և

2 Թ. Թորամանյան. Զվարթնոց եկեղեցին.—«Մուրճ», 1905, № 5, էջ 188. կրճատումներով արտատպված է՝ Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, կազմեց Կ. Ղաֆադարյան. հ. 1, Երևան, 1942, էջ 247—251։

3 Թ. Թորամանյան. Նամակներ. Երևան, 1968, էջ 8։

մասնակից դառնում Զվարթնոց տաճարի պեղումներին, որոնք սկսված էին մի քանի տարի առաջ Խաչիկ վարդապետի անձնական նախաձեռնությամբ։

Երբ Թորամանյանը սկսեց աշխատել Զվարթնոցում, պեղումները դեռ չէին ամբողջացած, տաճարի միայն մեջն էր մաքրված, իսկ դուրսը դեռևս մնում էր չպեղված։ Մասնակցելով Զվարթնոցի պեղման աշխատանքներին, նա անգնահատելի ծառայություն մատուցեց գիտությանը՝ կորստից փրկելով մի նշանավոր հուշարձանի մնացորդները և նրանց գիտական աշխարհին ներկայացնելով։ Զվարթնոցի վսեմ ու հոյակապ ձևերն ավերակների խառնիճաղանջ կույտի տակից դուրս բերվեցին, վերակենդանացան ու վեր խոյացան և մատչելի դարձան մեր սերնդի համար միմիայն շնորհիվ Թորոս Թորամանյանի հմուտ և խորաթափանց հետազոտության։

Զվարթնոցի ճարտարապետական-տարածական ամբողջ կերպարը, որին հանգեց Թորամանյանը վերակազմության իր նախագծով, հիմնված էր հուշարձանի պահպանված մասերի ուշադիր զննման, հատակագծից բխող կոնստրուկտիվ համակարգի պարզ պատկերացման և ճարտարապետական բազմաթիվ բեկորների խորաթափանց ընբռնման վրա։ Նրա վերակազմությամբ Զվարթնոցը պատկերանում է մեր առաջ իր եռաստիճան, ուղղաձիգ առանցքի նկատմամբ համախմբված միասնական ծավալով։ Զվարթնոցի վերակազմության վերաբերյալ իր հիմնական գաղափարները Թորամանյանը շարադրել է այն փոքր հոդվածում, որը լույս է տեսել 1905 թ. «Մուրճ» ամսագրի 5-րդ համարում և որը փաստորեն հանդիսանում է Զվարթնոցի վերակազմության նրա նախագծի բացատրագիրը։

Թորամանյան գիտնականի մկրտությունը, հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում նրա առաջին ավանդը հանդիսացող այս անդրանիկ աշխատանքը ոմանց կողմից ընդունվեց թերահավատությամբ, առաջադրեց բուռն վեճեր։ Էջմիածնի որոշ հոգևոր գիտնականներ, նույնիսկ անընդունելի համարեցին այն։ Սակայն դա չընկճեց, այլ ընդհակառակը, էլ ավելի կոփեց նրա հաստատակամությունը իր գիտական հակառակորդների նկատմամբ. վերահաս դեպքերն էլ միանգամայն նպաստավոր եղան Թորամանյանի համար։ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անիում տարվող հնագիտական սիստեմատիկ բնույթ կրող աշխատանքների ժամանակ, 1905—1906 թթ. ընթացքում բացվեց Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցու ավերակները։

Ինչպես հայտնի է մատենագրական վկայություններից, այս եկեղեցին, որ 1001—1020 թթ. կառուցել էր Տրդատ ճարտարապետը Գագիկ I թագավորի պատվերով, ճշտորեն վերարտադրում էր Զվարթնոցի տաճարի ձևերն ու չափերը։ Պեղումների ժամանակ գտնվեց նաև Գագիկ թագավորի քարե արձանը՝ իր կառուցած եկեղեցու մանրակերտը ձեռքին։ Սա էլ որոշեց Զվարթնոցի վերակազմության շուրջ եղած վեճերը՝ հօգուտ Թորամանյանի տեսակետի, քանի որ Գագիկի կառուցած տաճարը մանրակերտում եռահարկ էր, ուներ տարածական այնպիսի ձևեր, ինչպիսին մեկ տարի առաջ ցույց էր տվել Թորամանյանը՝ Զվարթնոցի վերակազմության իր նախագծում։ Այս հանգամանքը գիտական շրջաններում մեծ չափով բարձրացրեց Թորամանյանի հեղինակությունը, իսպառ փարատեց այն տարակարծությունները, որ կային Զվարթնոցի վերակազմության նախագծի կապակցությամբ։

Փոխադրվելով Անի, մասնակցելով Ն. Մառի կողմից գլխավորված հնագիտական արշավախմբի աշխատանքներին, Թորամանյանը չի դադարում հետաքրքրվել Զվարթնոցի ճակատագրով։ Անխոնջ գիտնականի համար արտակարգ բարենպաստ նշանակություն ունեցավ ծանոթությունը պրոֆ. Նիկողայոս Մառի հետ, «...որոն հովանավորության տակ,— ինչպես նշում է ինքը,— խաղաղ և ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլև համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ»[4]։ Իր հերթին բարձր էր գնահատում Թորամանյանին Ն. Մառը։ «Էջմիածնի տաճարը» աշխատության՝ իր թարգ-

---

4 Թ. Թորամանյան. Նյութեր..., հ. 2, էջ 287։

մանությամբ լույս ընծայման առթիվ Ն. Մառը գրում է. «Ես առավել առողջ լույս եմ սպասում ճարտարապետական հուշարձանների լեզվից, երբ մենք սովորենք այն հասկանալ։ Թորամանյանի մեջ ես տեսնում եմ այդ լեզվի առաջին ուսուցչին»[5]։

Շուրջ հինգ տարի, 1905—1909 թթ. Թորամանյանը Մառի գլխավորած Անիի հնագիտական արշավախմբի մասնակիցն էր։ Այդ տարիների ընթացքում նա անգնահատելի ծառայություն մատուցեց գիտությանը, մանրակրկիտ կերպով չափագրելով ու լուսանկարելով բացած հուշարձաններն ու նրանց բազմաթիվ բեկորները, կազմելով Գագկաշենի, Բախտաղեկի և Հովվի եկեղեցիների, Անիի կամրջի ու Հյուրատան ճակատի վերակազմության նախագծերը, չափագրելով բազմաթիվ բեկորներ ու հուշարձաններ, զբաղվելով առանձին հուշարձանների վերանորոգման ամրացման աշխատանքներով։ Սակայն նրա հետազոտությունների շրջանակը շատ ավելի լայն էր, քան այն տարածքը, որ սահմանափակված էր Անիի պարիսպներով։ Շիրակում, Արագածոտնում և Արարատյան դաշտավայրում ոտքով գյուղից գյուղ շրջելով, նա անցնում էր մի հուշարձանից մյուսը, հետազոտում, չափագրում ու լուսանկարում էր հայ ժողովրդի շինարարական բազմադարյան գործունեության տարբեր շրջաններին վերաբերող կանգուն ու կիսավեր հուշարձաններ՝ կուտակելով հայկական ճարտարապետության վերաբերյալ չափազանց հարուստ նյութ, որը նա սիստեմատիկաբար մշակում էր և հանդես գալիս պարբերական մամուլում, բոլորի սեփականությունը դարձնելով իր բեղմնավոր հետազոտությունների արդյունքները։

Սկսած 1905 թ. Թորամանյանը պարբերական մամուլի էջերում հրատարակել է բազմաթիվ նամակներ ու հոդվածներ հայրենի երկրի հնությունների վերաբերյալ։ Հաղթահարելով նյութական մեծ դժվարություններ, որոշ մեկենասների օժանդակությամբ նրան հաջողվում է հրատարակել նաև աշխատություններ առանձին գրքերով։ Դրանցից կարևոր է հիշատակել «Տեկորի տաճարը» մենագրական ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1911 թ. և հանդիսանում է Թորամանյանի նախասովետական շրջանի ամենաուշագրավ գիտական աշխատությունը։ Հեղինակը, չսահմանափակվելով հուշարձանի մանրակրկիտ ուսումնասիրությամբ ու վերակազմությամբ, նրանում քննության է առնում հայ ճարտարապետության զարգացման մի շարք սկզբունքային հարցեր։

Նախասովետական շրջանում նա ոչ միայն խոշոր աշխատանք կատարեց հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման և դիտական արժեքավորման առումով, այլև զբաղվեց այդ ժառանգության լայն պրոպագանդումով՝ առաջավոր հայ մտավորականության և գիտական շրջաններում։ Պարբերական մամուլում հրատարակած բազմաթիվ նամակներից և հոդվածներից բացի, նա հանդես է գալիս զեկուցումներով և հաղորդումներով կամ սիրալիր կերպով տրամադրում տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ հավաքած գիտական հարուստ նյութերը հայ ճարտարապետությամբ հետաքրքրվող հայրենի և օտարազգի գիտնականներին։

Եվրոպական արվեստաբաններից առաջինը Յոզեֆ Ստրժիգովսկին է որոշակի հետաքրքրություն ցուցաբերել Թորոս Թորամանյանի գիտական հարուստ նյութերի, դրանց հիման վրա արված համարձակ եզրահանգումների նկատմամբ։ Վիեննայի համալսարանի արվեստագիտության ամբիոնը գլխավորող այս գիտնականը, որն իր հետազոտությունների մեջ հետևողականորեն առաջ էր քաշում համամարդկային մշակույթի մեջ Արևելքի ժողովուրդների կարևոր ներդրման տեսակետը, նույն դիրքերից էր մոտենում հայկական ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերին՝ համարձակորեն

---

5 Н. Я. Марр. По поводу работы архитектора Т. Тораманяна «О древнейших формах Эчмиадзинского храма».—Записки Вост. отд. Имп. Русск. Археол. общ. Т. XIX, С.-Петербург, 1909, с. 63.

վերանայելով որոշ գիտնականների, հատկապես բյուզանդագետների (որոնց կարկառուն ներկայացուցիչը Շառլ Դիլն էր) ոչ ճիշտ դիրքորոշումը։ Ահա թե ինչու միմյանց հանդիպելու և համագործակցելու ձգտումը երկուստեք էր։ Ինչպես Ստրժիգովսկին, այնպես էլ Թորամանյանը այդ օգտակար էին համարում։ Երկու գիտնականների միջև կապ ստեղծելու, հայ ճարտարապետությունը ուսումնասիրելու նրանց համատեղ ջանքերում խոշոր է Ստրժիգովսկու ուսանող և աշխատակից Լևոն Լիսիցյանի (ազգագրագետ և բանասեր Ստեփան Լիսիցյանի որդու) ավանդը[6]։ Կատարելով Ստրժիգովսկու առաջադրանքը, Լևոն Լիսիցյանը 1913 թ. մայսի 7-ի իր նամակում գրում է Թ. Թորամանյանին. «...Պ. Ստրչիգովսկին շատ կցանկանար, որ Դուք գաք գոնե մի չորս ամսով Վիեննա, երբ հայկական գեղարվեստի վրա պետք է աշխատեն ինստիտուտի մեջ և Ձեր նյութերն էլ բերեք, որ այստեղ անշուշտ կարելի կլինի գործադրել գիտական ուսումնասիրությունների համար և թերևս հրատարակել»[7]։ Իր պատասխան նամակում Թորամանյանը գրում է. «Մեծ հաճույքով կարդացի Ձեր նամակը։ Հայ գեղարվեստը եվրոպական գիտնականներու ուսումնասիրության նյութ շինել՝ իմ սրտիս ամենամոտիկ բանն է. չափազանց ուրախ եմ և շնորհակալ, որ պր. Հ. Ստրչիգովսկին պիտի աջակցի վաղուց հետե իմ փայփայած նպատակիս։ Ինձ հայտնի են հարգելի գիտնականին հայ գեղարվեստի համար ունեցած սերը և հանուր աշխարհի ծանոթացնելու համար կատարած աշխատությունները, շատ անգամ ինքս ալ ղեկավարվեր եմ անոր կարծիքներով. անկեղծորեն կհայտարարեմ, որ ներկան և ապագան երախտագիտությամբ պիտի հիշե պր. Ստրչիգովսկիի անունը, երբ հարցը պատմական հայ գեղարվեստի ժողովրդականացման վրա է»[8]։

1913 թ. ապրիլի 16-ին Թորամանյանը գալիս է Վիեննա։ Առաջին իսկ օրերից մեծ գիտնականը շրջապատվում է Լևոն Լիսիցյանի խնամքով ու հոգատարությամբ։ Թորամանյանի մասնակցությունը արվեստի պատմության ինստիտուտում կազմակերպված սեմինարներին կարիք է հարուցում որոշ ճշտումներ մտցնել հայ ճարտարապետությանը նվիրված սեմինարի նախօրոր ընդունած ծրագրում։ Ըստ կայացրած պայմանի, Թորամանյանին բաժին է ընկնում տեղեկագրերի և նյութերի (չափագրությունների, լուսանկարների) հայթայթումը, իսկ Լ. Լիսիցյանին՝ դրանց թարգմանությունը և մշակումը գերմաներեն հրատարակության համար։ Վերջինիս պարտականությունների մեջ է մտնում նաև հայ և վրաց ճարտարապետության վերաբերյալ ռուսերեն աշխատությունների թարգմանությունը գերմաներեն։ Այդ մասին կայացած համաձայնությունը ավելի ևս ամրապնդվում է նույն թվականի աշնանը, երբ վերջապես իրականանում է ավստրիացի գիտնականի վաղեմի փափագը՝ տեղում ծանոթանալ հայ ժողովրդի ճարտարապետական հարուստ ժառանգությանը, և երբ Թորամանյանն ու Ստրժիգովսկին կրկին հանդիպում են՝ արդեն Հայաստանում։

Ստրժիգովսկու գլխավորած գիտական արշավախումբը (որի մեջ մտնում էին Հայնրիխ Գլյուկը և Լևոն Լիսիցյանը) Թիֆլիսի վրայով ժամանում է Հայաստան սեպտեմբերի սկզբին և Թորամանյանի առաջնորդությամբ շուրջ 20 օր ծանոթանում է Օիրոակի, Արագածոտնի, Այրարատի մի շարք կարևոր հուշարձաններին[9], կատարում նրանց հանգամանալից հետազոտությունը։

Հանձին Թորոս Թորամանյանի Ստրժիգովսկին հանդիպեց հայ ճարտարապետության մեծ գիտակի, որի հարուստ նյութերն ու գիտելիքները իսկական գյուտ էին նրա համար։ Հանձին Յոզեֆ Ստրժիգովսկու Թորամանյանը

---

6 Վ. Մ. Հարությունյան. Գիտական մի համագործակցության մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 89—104։

7 Թ. Թորամանյան. Նամակներ, էջ 419։

8 Նույն տեղում, էջ 192։

9 Ստրժիգովսկու գրքում (Die Baukunst der Armenier und Europa, S. 14—27) զետեղված է մանրամասն հաշվետվություն արշավախմբի աշխատանքների վերաբերյալ։

ձեռք բերեց համաշխարհային ճանաչում ունեցող մի արվեստագետ բարեկամի, որը լայնորեն պրոպագանդեց Թորամանյանի գործունեությունն ու գիտական հավատամքը։

Վերադառնալով Վիեննա, Ստրժիգովսկին և Լևոն Լիսիցյանը առավել ջանասիրությամբ ձեռնարկեցին Հայաստանից բերած հարուստ նյութերի գիտական մշակումը, սպասելով նոր հանդիպման Թորամանյանի հետ, որն ըստ պայմանավորվածության հաջորդ տարի պիտի Վիեննա գար հայ ճարտարապետության պատմության մասին համատեղ աշխատություն ստեղծելու համար։ Վերջապես համաշխարհային պատերազմը Թորամանյանին զրկեց Ստրժիգովսկու հետ կապը վերահաստատելու հնարավորությունից, որի մոտ թողել էր իր գիտական նյութերը։ Վերջինս, ելնելով ստեղծված դրությունից, ամբողջությամբ օգտագործեց Թորամանյանի չափագրությունները ու լուսանկարները (նշելով նրանց հեղինակի անունը), ինչպես նաև նրա դրույթները հայ ճարտարապետության վերաբերյալ, շարադրեց և 1918 թ. հրատարակեց իր նշանավոր երկհատոր աշխատությունը՝ «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան», որն ընդունվեց մեծ հետաքրքրությամբ և որոշ գիտնականների ստիպեց հիմնովին վերանայել իրենց սխալ տեսակետները հայ ճարտարապետության վերաբերյալ։

* * *

Թորամանյանի խոշորագույն ծառայությունը հայ արվեստի նկատմամբ նախ և առաջ այն է, որ նա հանգամանորեն և հիմնավոր կերպով քննադատության ենթարկեց եվրոպական մի շարք գիտնականների և ճանապարհորդների, հատկապես Դյուբուա դը Մոնպերեի, Օգյուստ Շուազիի, Շառլ Դիլի և ուրիշների սխալ տեսակետները հայ արվեստի և ճարտարապետության պատմության մի շարք հարցերի մասին։

Եվրոպական այս ականավոր գիտնականների սխալները քննադատելիս Թորամանյանը հանդես է բերում խորը գիտելիքներ ոչ միայն հայ ճարտարապետության, այլև ճարտարապետության համընդհանուր պատմության հարցերում։ Նա իր տեսակետները հիմնավորում է կոնկրետ փաստերով, ցույց տալով այն իրական պատկերը, որով բնութագրվում է հայկական ճարտարապետության զարգացումն առանձին շրջաններում։ «Հայոց ճարտարապետության և գեղարվեստի մասին,— գրում է Թորամանյանը,— հայ և օտար լեզուներով շատ տարիներե ի վեր գոյություն ունի մի ընդարձակ գրականություն, սակայն այդ գրականությունը, աննշան բացառությամբ, լուրջ ուսումնասիրություններ չեն»[10]։ Ինչպես նա նշում է այնուհետև, Հայաստան եկած բազմաթիվ եվրոպացի գիտնական ճանապարհորդներ, որոնց մի մասը ճարտարապետներ են եղել, «...միշտ հակասական և իրականին անհամապատասխան կարծիք են հայտնել այդ հիշատակարանների մասին՝ թողնելով տպավորության ներքև։ Ոմանք բյուզանդական են կարծել, ոմանք արաբական, ոմանք սելջուկյան, և մինչև իսկ հնդկական տարբեր նշմարողներ եղել են կանգուն կամ կիսականգուն հուշարձանների ոճերու մեջ»[11]։

Անդրադառնալով եվրոպական գիտության հանդեպ որոշ հայ գիտնականների ունեցած վերաբերմունքին, Թորամանյանը «Տեկորի տաճարը» գրքի առաջաբանում իրավացիորեն նշում է. «Եթե կկարծեն, որ եվրոպացի գիտնականը, արվեստագետը իրենցմե ավելի խելք ու կարողություն ունի և իրենցմե ավելի լավ կտեսնի ճշմարտությունը, շատ կսխալվին։ Այս կարծիքով նախ ինքնդինքին կզրկեն արժանապատվութենե... Ես կկարծեմ, որ բավական է այլևս եվրոպացի գիտնականին մեծ մասամբ իրականութենե և ճշմարտութենե զուրկ տեսություններն ու վճիռներն թողուլ, որ պատմությունը անմահացնե։ Մինչև ե՞րբ անոնք պիտի գրեն և մենք թարգմանենք որպես երկնային

10 Թ. Թորամանյան. Նյութեր..., հ. I, էջ 48։

11 Նույն տեղում, էջ 52։

պատգամներ մեր գիտության կարոտ հասարակությանը մատակարարելու համար... Ինչո՞ւ համար մեր գիտնական մասնագետներու երևակայության մեջ այնչափ խոշորացել է եվրոպացին, և իրենք փոքրացեր են ու չեն հավատար, որ իրենք ալ ունեն տաղանդ, կարողություն կազմելու այնպիսի հայագիտական մատենադարան մը, որուն առջև եվրոպացի գիտնականն ալ պատկառանք զգա և փոխանակ տգետ ու անկարող առաջնորդներու տված տեղեկություններն արձանագրելու, այնտեղ գտնե իր փնտրած փաստերն ու ճշմարտությունները»[12]։

Թորամանյանը վճռականապես հանդես եկավ օտարազգի այն գիտնականների դեմ, որոնք փորձում էին հայ ճարտարապետության առաջացման նախադրյալները կտրել հայրենի հողից ու ժողովրդից և դիտել այն որպես բյուզանդական կամ այլ երկրների ճարտարապետության օրգանական մասը։ Պիտի նշել, որ այս հարցում Թորամանյանի գիտական հայացքները հեղաշրջող նշանակություն ունեցան ոչ միայն հայրենական գիտության մեջ, այլև մեծ չափով նպաստեցին եվրոպական մի շարք գիտնականների ու արվեստագետների սխալ կարծիքների վերանայմանը։ Դրա ցայտուն օրինակը կարող է համարվել Ստրժիգովսկու վերը նշված աշխատությունը, որում հեղինակը ոչ միայն սխալ է համարում հայ ճարտարապետության ինքնուրույնությունը ժխտելը, նրան բյուզանդական ճարտարապետության մի ճյուղը համարելը, այլև համեմատական ընդարձակ նյութի հիման վրա համոզիչ կերպով ցույց է տալիս այն ազդեցությունները, որ ունեցել է հայկական ճարտարապետությունը եվրոպական մի շարք երկրների ճարտարապետության վրա։

Հայ ճարտարապետության ինքնուրույնությունը ճանաչելու համար մեծ կրքոտությամբ պայքարելով հանդերձ, ընդգծելով նրա առանձնահատուկ և բնորոշ հատկանիշները, Թորամանյանը, սակայն, այն չի մեկուսացնում ճարտարապետության զարգացման ընդհանուր ընթացքից, չի սահմանափակում ազգային նեղ շրջանակներով, այլ ընդունում է ժողովուրդների միջև տեղի ունեցող փոխազդեցությունը՝ գոյություն ունեցող սոցիալ-պատմական իրադրության և կուլտուրական փոխհարաբերությունների հողի վրա։ «Ճշմարիտ է,— գրում է նա «Տեկորի տաճարը» գրքի առաջաբանում,— որ հայ գեղարվեստը հաճախ ենթարկվեր է դրացի զարգացած ազգերու ազդեցության, սակայն պարզ բաղդատություն մը բավական է ապացուցանելու, որ անհամեմատ ավելի շատ են ստեղծագործությունները, քան փոխառությունները։ Փոխառություններն ալ հազիվ թե գործածված են նույնությամբ, առանց զանոնք հայացնելու։ Եվ ինչքան իրենք ազդվեր են օտարեն, նույնչափ ալ ազդեր են իրենցմե շատ ավելի մեծ ազգերու վրա։

Պահ մը ենթադրենք, որ օտարներու ազդեցությունը շատ զորեղ լինի հայ արվեստի մեջ, մի՞թե այդքան արհամարհելի է այս պարագան։ Ես կկարծեմ, որ ավելի քան պատվաբեր պետք է լինի, որովհետև չկա մի ազգ պատմության մեջ, որ բոլորովին կղզիացած ապրելով, հասներ քաղաքակրթության գագաթնակետին և ինքը միայն ներգործեր ուրիշ ազգերու վրա, առանց ուրիշեն ազդվելու։ ...Արվեստ, գիտություն, լեզու, գրականություն ամեն ազգի մեջ զարգացեր են միշտ մեկը զմեկեն ազդվելով, և այս է քաղաքակրթության զարգացման բնական օրենքը...։ Հին հայերը եթե գալե ի դար փոխվեր են և օտարնիրու քաղաքակրթությունը իրենց մեջ մտցուցեր են, կնշանակե, թե երբեք հետ չեն մնացեր իրենց շուրջը զարգացող քաղաքակրթության հեղաշրջումներեն, և անընդհատ մտցեր են ամեն ճյուղի մեջ, առանց, սակայն, մեքենաբար հետևողներ լինելու, համառ կերպով պահեր են իրենցը և փոխառությունները ենթարկեր են իրենց սեփական ճաշակին»[13]։

Այդ տեսանկյունից մոտենալով հայ ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերին, Թորամանյանը նշել է այն բարերար ազդեցությունը, որ կրել են իրենց վրա, ասենք, Հայկական բարձրավանդակում ապրող ցե-

12 Թ. Թորամանյան. Տեկորի տաճարը, էջ ԺԸ—ԺԹ։

13 Նույն տեղում, էջ ԾԶ—ԺԷ։

ղերի կառուցողական տեխնիկան ու ճարտարապետությունն ուրարտականից։ Ստրկատիրական շրջանում հունա-հելլենիստական և հռոմեական, իսկ վաղ ֆեոդալիզմի շրջանում՝ սիրիական և այնուհետև բյուզանդական ճարտարապետության որոշ ազդեցություն է եղել հայկական ճարտարապետության վրա, սակայն Թորամանյանն այդ ազդեցությունները երբեք չի դիտել որպես հայ ճարտարապետության զարգացման հիմնական աղբյուր։ «Ինչպես հին ասորաքաղդեական, սասանական,— նշում է նա,— նույնպես հունա-հռոմեական արվեստներու ներգործությունները երկարատև չեն եղած, շուտով ձուլված են հայ արվեստի որոշ ինքնուրույն ոճին մեջ և լիովին կերպարանափոխված են»[14]։

Թորամանյանը Հայաստանի վաղ քրիստոնեական որոշ հուշարձաններում (Տեկորի և Էջմիածնի տաճարներ, Երերույքի և Քասաղի բազիլիկներ) ու այլ հուշարձանների ճարտարապետական որոշ ձևերում տեսնում է անտիկ ճարտարապետության ավանդույթների առկայություն և դա միանգամայն հասկանալի է, որովհետև մի կողմից՝ հայկական նախաքրիստոնեական արվեստի դծերը, որոնք կազմավորվել էին հունա-հելլենիստական և հռոմեական արվեստների ներգործությամբ, մյուս կողմից՝ Սիրիայից Հայաստան թափանցած հռոմեական ճարտարապետության որոշ ավանդույթներն անվիճելիորեն իրենց դերն են խաղացել վաղ քրիստոնեական եկեղեցական ճարտարապետության կազմավորման գործում։ Ձևաստեղծման այդ բարդ պրոցեսը, անտարակույս, ընթանում էր տեղական և անտիկ ճարտարապետական ձևերի սինթեզման միջոցով։ Անտիկ ճարտարապետության ավանդույթների առանձին վերապրուկներ կարելի է մատնանշել նույնիսկ ծաղկուն միջնադարի հայ ճարտարապետության որոշ հուշարձաններում[15]։

Ֆեոդալական Հայաստանի ճարտարապետության ինքնուրույն դծերի վերջնական կազմավորման ժամանակը Թորամանյանը միանգամայն իրավացիորեն համարում է VII դարը, երբ հայ ճարտարապետությունը նշանավորվում է մի շարք աչքի ընկնող նվաճումներով՝ ինչպես աշխարհիկ և եկեղեցական շենքերի տիպերի ստեղծման, այնպես էլ ճարտարապետական-գեղարվեստական ու կոնստրուկտիվ ինքնատիպ միջոցների մշակման ասպարեզում։

Թորամանյանի գիտական ամբողջ ժառանգության մեջ Հայաստանի V—VII դդ. ճարտարապետության ուսումնասիրությունը գերիշխող տեղ է գրավում։ Բացի Տեկորի, Երերույքի, Քասաղի, Էջմիածնի Մայր տաճարի և Զվարթնոցի մանրամասն հետազոտությունից, նա զբաղվել է նաև Հայաստանի ֆեոդալական ճարտարապետության ծաղկման շրջանին պատկանող մի շարք այլ կարևոր հուշարձանների՝ Հռիփսիմեի և Գայանեի եկեղեցիների, Ավանի, Պտղնիի, Թալինի մեծ ու փոքր, Թալիշի (Արուճի), Մաստարայի, Արթիկի, Բագարանի և բազմաթիվ այլ հուշարձանների ուսումնասիրությամբ, որը հնարավորություն է տվել նրան նշելու այն օրինաչափությունները, որոնք հատուկ էին այդ շրջանի եկեղեցական շենքերին՝ հատակագծային տիպերի, ինչպես և կոնստրուկտիվ ու ճարտարապետական-գեղարվեստական լուծումների տեսակետից։ Վերոհիշյալ հարցերի հետազոտության արդյունքները շարադրված են նրա «Դարաշրջանական հատկանիշներ», «Մասնավոր ուսումնասիրություն հայոց նախաքրիստոնեական կրոնի և համեմատություններ եկեղեցիների հատակագծերի», «Հայոց հնագույն եկեղեցիների հատակագծային ձևերը», «Ժամանակագրական համեմատություն հայոց հնագույն եկեղեցիներու հատակաձևերու մասին» և մի շարք այլ աշխատություններում։

Դրա հետ միասին, նրա գիտական ժառանգության մեջ ոչ սակավ տեղ է գրավում միջնադարյան, առանձնապես Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանի ճարտարապետության ուսումնասիրությունը։ Նրա կողմից ա-

---

14 Նույն տեղում, էջ 53—54։

15 Տե՛ս Վ. Մ. Հարությունյան. Անտիկ ավանդույթների ժառանգորդությունը միջնադարի հայ ճարտարապետության մեջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 4, էջ 13—21։

վելի հանգամանորեն են ուսումնասիրված Անիի եկեղեցական ու աշխարհիկ հուշարձանները՝ Մայր տաճարը, Գագկաշենը, Փրկչի, Ապուղամրենց, Հովվի, Առաքելոց, Նաղշլուի, Բախտաղեկի և այլ եկեղեցիները, ինչպես նաև Բագրատունիների պալատը, «Պարոնի» պալատը, հյուրատունը, կամուրջը և աշխարհիկ այլ կառուցվածքներ։ Նա զբաղվել է նաև Անիի սահմաններից դուրս գտնվող այնպիսի նշանավոր վանքային համալիրների հետազոտությամբ, ինչպիսիք են Խծկոնքը, Հոռոմոսը, Մարմաշենը և այլն։ Նրա ուսումնասիրությունների մեջ համեմատաբար քիչ են ընդգրկված XII—XIV դդ. վանքային ճարտարապետական համալիրները։ Այդ շրջանի եկեղեցական ճարտարապետությանն են նվիրված Թորամանյանի «Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը», «Գագիկի տաճարի վերակազմությունը», «Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիների մեջ» և մի շարք այլ աշխատություններ։

Ի տարբերություն այն հետազոտողների, որոնք հայ ժողովրդի հարուստ ժառանգության մեջ գլխավորապես վեր են հանել եկեղեցական հուշարձանները, Թորամանյանը առաջին հետազոտողներից էր, որ հատուկ ուսումնասիրության արժանացրեց ֆեոդալական Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը՝ Անիի պալատական շենքերն ու բնակարանները, հյուրանոցներն ու իջևանատները, կամուրջներն ու պարիսպները, Հայաստանի իշխանական ամրոցներն ու դղյակները և քաղաքացիական ճարտարապետության բազմատեսակ հուշարձանները։ Նրա «Անի», «Հայաստանի արքունական և իշխանական ապարանքներն ու անոնց ներքին կենցաղը», «Զվարթնոցի հարավային կողմի շինությունները», «Անվո միջնաբերդի պեղումները» և մի շարք այլ աշխատություններ ու հոդվածներ նվիրված են ֆեոդալական Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրությանը։

Իր հետազոտությունների մեջ Թորամանյանը հատուկ տեղ է հատկացրել նաև շինարարական արվեստի և կոնստրուկցիաների հարցերին։ Դրանց է նվիրված նրա «Շինանյութերը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում» աշխատությունը։ Նույն այդ հարցերին նա մասնակիորեն անդրադառնում է «Զվարթնոց եկեղեցին», «Տեկորի տաճարը» և այլ աշխատություններում։

Ճարտարապետական ստեղծագործության հաջողությունը Թորամանյանը կապում էր ոչ միայն ճարտարապետի հմտության, այլև նրա, կառուցող վարպետի ու բանվորի համագործակցության հետ։ «Բավական չէ գործը ղեկավարող և վարողուն երևակայության թռիչքին իրականացման ձգտող ճարտարապետին տաղանդը,— գրում է նա,— եթե ճարտար արհեստավորներու համագործակցությունը չաջակցի՝ մարմնացում տալու ճարտարապետի ուղեղին մեջ ծրագրված հրաշակերտին»[16]։

Պատմականորեն քննելով այն պայմանները, որոնցում զարգացել և ստեղծագործական բարձր նվաճումների է հասել ֆեոդալական Հայաստանի ճարտարապետությունը, Թորամանյանը կարևոր նշանակություն է տալիս հայ ժողովրդի դերին, նշելով, որ նա ընդունակ է եղել նույնիսկ անբարենպաստ պայմաններում կերտել ճարտարապետական բարձրարվեստ գործեր։ Մի առիթով նա գրել է. «Երբ Բյուզանդիայի և Պարսկաստանի նենգավոր քաղաքականության մշտապես զոհ դառած բուռ մը հայ ժողովուրդը ծանր հարկերի և տուրքերի տակ ճնշված կկանգնե Զվարթնոցի նման մի գլուխ գործոց և դուգընթացաբար մեծագործություններ համարվելու չափ ուրիշ բազմաթիվ գեղարվեստական կոթողներ, եթե Բյուզանդական կայսրության գանձարանն ունենար յուր ձեռքին մեջ, շատ Ս. Սոֆիաներ կարող էր կանգնել, որովհետև Զվարթնոցը մենակ չէ մնացած Հայաստանի մեջ, ինչպես միայնակ է մնացել Ս. Սոֆիան բյուզանդական բովանդակ կայսրության մեջ»[17]։

Թորամանյանի հսկայ հայ ճարտարապետության ուսումնասիրության

16 Թ. Թորամանյան. Նյութեր..., հ. 1, էջ 262։

17 Նույն տեղում, հ. 2. էջ 77—78։

հիմնական աղբյուրը իրենք հուշարձաններն էին։ Նրան խորթ էր այնպիսի մեթոդը, երբ հետազոտությունների համար հիմք են ծառայում ոչ թե կոնկրետ հուշարձանների ուսումնասիրության հետևանքով հավաքած նյութերը, այլ վերացական դատողությունները կամ, լավագույն դեպքում, ուրիշի հավաքած ու հրապարակած նյութերն ու տեսակետները։

Բացի հուշարձանների կենդանի լեզվից, Թորամանյանը մեծ նշանակություն էր տալիս նաև մատենագրական և հնագիտական սվյալներին։ «...Մեր ոսոսանակի արվեստագետները,— գրում է նա,— եթե ուսումնասիրություններով են պարապում, հատվածներ պիտի գտնեն պատմագրության մեջ և կամ հասառոտ ակնարկներ, որոնք պատահաբար ընկած են մատենագրի գրչին տակ՝ բոլորովին տարբեր մի պատկեր ամբողջացնելու համար, սակայն անհուն նշանակություն ունեն հինօրյա ճարտարապետության և գեղարվեստի ուսումնասիրության համար»[18]։ «...Առանց պատմական գրականության ուսումնասիրության,— շարունակում է նա,— պատմական ճարտարապետություն և դեղարվեստ ուսումնասիրել, եթե չըսեմ անկարելի, գեթ շատ դժվար է»[19]։ Սակայն Թորամանյանը հատուկ ընդգծում է, որ պատմական գրականությունը պիտի մշակի ինքը արվեստագետը, որովհետև արվեստին վերաբերող առանձին արժեքավոր տեղեկություններ կարող են վրիպել նույնիսկ լավ պատմաբանի ուշադրությունից։ Իր բոլոր աշխատություններում նա հանդես է բերում հայկական մատենագրական աղբյուրների մեծ իմացություն և հմտորեն օգտագործում է դրանք հուշարձանների թվագրման ու պատմության համար։

Մեծ է Թորամանյանի գիտական ժառանգությունը, նա խոշոր ներդրում է կատարել հայ ճարտարապետության գիտական պատմության մշակման գործում և ստեղծել մի ամուր պատվանդան, որի վրա հենվելով ընթացավ հայ ճարտարապետության հետագա ուսումնասիրությունը։

Բացի առաջավոր գիտնական լինելուց, Թորամանյանը հառնում է մեր առջև նաև որպես հասարակության ակտիվ անդամ, մեծ հայրենասեր և առաջավոր մտավորական ու որպես այդպիսին կարող է դասվել նախասովետական շրջանի դեմոկրատական աշխարհայացք ունեցող հայ գործիչների շարքը։

* * *

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Թորամանյանի համար գիտական գործունեության լայն ասպարեզ բացվեց, նրա հետազոտական տագանդի դրսևորման նորմալ պայմաններ ստեղծվեցին։ Թ. Թորամանյանի, Ա. Թամանյանի, Մ. Սարյանի և ուրիշների նախաձեռնությամբ 1923 թ. ստեղծվեց Հնությունների պահպանության կոմիտե, որի հիմնադիրներից և գործուն անդամներից մեկն էր Թորամանյանը, որ երկար տարիներ ամենասոտ մասնակցություն ունեցավ հայ ժողովրդի բազմադարյան հուշարձանների պահպանության և ուսումնասիրության գործին։ Ալեքսանդր Թամանյանի կողմից գլխավորվող այդ համեստ հիմնարկը ձեռնարկեց պատմաճարտարապետական հուշարձանների հաշվառման և վերանորոգումների աշխատանքը, որում Թորամանյանը հանդես էր գալիս գլխավոր մասնագետի դերում, ծառայեցնելով այդ գործին իր մեծ գիտելիքներն ու փորձը։ Այդ ժամանակաշրջանի նրա կատարած աշխատանքներից կարելի է հիշատակել Երերույքի տաճարի հարավային պատի և Էջմիածնի Մայր տաճարի հարավային աբսիդի վերականգնումը (որին մասնակից էր նաև Ա. Թամանյանը), Սանահնի կամուրջի խելերի ամրացումը և այլն։

Հանդիսանալով Հայաստանի գիտության և արվեստի նորաստեղծ ինստիտուտի գիտական աշխատակիցը, նա հնագիտական մի շարք արշավախմբերի և պեղումների մասնակիցը դարձավ Վաղարշապատում ու Գեղարդաձորում։

---

18 Նույն տեղում, հ. I, էջ 51։

19 Նույն տեղում։

Ընդամենը երկու տարի աշխատելով որպես Հայաստանի պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ, նա կազմակերպեց այդ բաժնի աշխատանքները և կազմեց հայկական ճարտարապետության շատ հուշարձանների համառոտ նկարագրերը։ Դրան զուգընթաց, Թորամանյանը մինչև իր կյանքի վերջը (1934 թ.) սիստեմատիկաբար աշխատում էր ամփոփել իր 30-ամյա գիտական ուսումնասիրությունները «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծածավալ գրքում, որի համար նա գրեց մի շարք ընդհանրացնող գլուխներ, մաքրագծում և հրատարակության էր պատրաստում իր կատարած բազմաթիվ չափագրությունները։

Թորամանյանի վերջին շրջանի գործունեության պտուղն են հանգիսանում «Շինանյութերը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում», «Գեղարդաձորում կատարածս պեղումների տեղեկագիրը», «Խորհրդային իշխանությունը և մեր պատմական հուշարձանները», «Ակնարկ հայ հին ճարտարապետության վրա» և ուրիշ շատ աշխատություններ ու հոդվածներ։

Մեծավաստակ գիտնականի ուսումնասիրությունների հրատարակումը[20] հանդիսացավ նրա պայծառ հիշատակի լավագույն հավերժացումը, միևնույն ժամանակ խոշոր չափով խթանեց հայ ճարտարապետության պատմության հետագա ուսումնասիրությանը։ Լույս են տեսել բազմաթիվ նոր աշխատություններ՝ նվիրված հայ ճարտարապետության պատմությանը, որոնք հիմնականում խարսխվելով Թորամանյանի գիտական ժառանգության վրա, շարունակում են այն կարևոր գործը, որին նա այնպես ազնիվ կերպով ծառայեց իր ամբողջ կյանքում։

Մեծ գիտնականի հիշատակը հավերժացնելու մի կոթող էլ հանդիսացավ նրա նամականիի հրապարակումը[21]։ Դա Թորոս Թորամանյանի դժվարին, սրխրալից ու դիտական վաստակով պսակված կյանքի կատարյալ հայելին է, որն ընթերցվում է հետաքրքրությամբ, հուզմունքով։ Ամփոփում այդ գրքում ամփոփված են տարբեր անձանց ուղղված նրա ավելի քան 200 նամակներ, ինչպես նաև նրանցից ստացվածները։ Այդ նամակները կարևոր փաստաթղթեր են՝ մեծապես լրացնող հայրենանվեր գիտնականի բացառիկ հետաքրքիր կենսագրությունը, նրա տառապալից կյանքի հուշամատյանը, քաղաքացիական դիրքերի վառ վկայականը։ Նամականին առանձնապես գնահատելի է նրանով, որ այն հիմնականում դիտական բովանդակություն ունի, անհատականը կամ բացակայում է կամ էլ մղված է հետին պլան։

Հարազատ ժողովրդին անմնացորդ ծառայած բազմավաստակ գիտնականի հիշատակը անմար է։ Հայ ճարտարապետության գիտական պատմությանն հիմնադիր Թորոս Թորամանյանը արժանի է հավերժ երախտանքի։

Թորամանյանի աշխատությունների այժմ նախապատրաստվող եռահատոր ակադեմիական հրատարակությունը, որտեղ ամփոփվելու է նրա գիտական ողջ ժառանգությունը, գիտնականի հիշատակը հավերժացնող մի նոր հուշակոթող կլինի։

---

20 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու. հ. I, կազմեց և հրատարակության պատրաստեց Կարո Ղաֆադարյանը, ընդհանուր խմբագրություն Հովսեփ Օրբելու. Երևան, 1942. հ. II, Երևան, 1948։

21 Թ. Թորամանյան. Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Նազիկ Թորամանյանը. Երևան, 1968։

ТОРОС ТОРАМАНЯН

(К 120-летию со дня рождения)

Доктор архитектуры В. М. АРУТЮНЯН

Резюме

В изучении богатого архитектурного наследия армянского народа велика заслуга Тороса Тораманяна, посвятившего этому свою жизнь и по сути ставшего основоположником истории армянской архитектуры. Научное крещение Т. Тораманян получил в 1903 г. на развалинах Звартноца, обмерив и изучив храм, а затем составив проект его реконструкции. Позднее, в составе археологической экспедиции Н. Я. Марра, он принимал участие в раскопках городища Ани—столицы средневековой Армении. Здесь ученый обмерял многие памятники, их архитектурные детали, реставрировал их. Расширяя рамки своих исследований, он охватил памятники Ширака, Арагацотна и других районов Армении, что позволило создать стройную теорию развития армянского зодчества, его основополагающих закономерностей. Опубликованные Т. Тораманяном труды обратили на себя внимание отечественных и европейских научных кругов, послужили пересмотру мнений ряда ученых Запада в оценке армянской архитектуры. Научные выводы Тораманяна вместе с богатым фактическим материалом (обмеры, фотоснимки и т. п.) легли в основу капитального двухтомного труда И. Стржиговского «Архитектура армян и Европа» (Вена, 1918). С установлением Советской власти в Армении Тораманян получил широкие возможности для развертывания научной деятельности, принимал участие в организации охраны и реставрации памятников, в археологических раскопках, создании отдела архитектуры Музея истории Армении. Параллельно он занимался обобщением своих многолетних научных материалов для монографии по истории армянской архитектуры; смерть в 1934 г. помешала ему завершить монографию. Научное наследие Т. Тораманяна опубликовано в его двухтомных «Материалах по истории армянской архитектуры» (1942, 1948) и других книгах. В настоящее время готовится новое, академическое издание трудов ученого.